

„Ինչ է Գենդերային հավասարությունը,,

«Արագածոտնի փոխմարզպետ Նունե Մովսիսյանի ելույթը գենդերային հարցերով զբաղվող մարզային մշտական հանձնաժողովի նիստի ժամանակ

Գենդերը կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների, հնարավորությունների և պարտականությունների մասին օրենք է:

Գենդերը տարբեր սեռի անձանց ձեռքբերովի, սոցիալապես ամրագրված վարք, կանանց և տղամարդկանց միջև հարաբերությունների սոցիալական հայեցակետ, որն արտահայտվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ ներառյալ՝ քաղաքականությունը, տնտեսությունը, իրավունքը, գաղափարախոսությունը, մշակույթը, կրթությունը, գիտությունն ու առողջապահությունը:

Սեռը բնորոշում է տղամարդու և կնջ սեռական հատկանիշները, իսկ գենդերը բնորոշում է մշակութային և սոցիալական հատկանիշները:

Տղամարդու և կնջ սոցիալական և մշակութային հատկանիշները ժամանակի հետ փոխվում են, ահա թե ինչու ենք ասում, որ գենդերը ձեռքբերովի է:

Օրինակ՝ մշակութային հատկանիշ է հանդերձանքը, իսկ տղամարդիկ և կանայք տարբեր ժամանակներում կրում էին տարբեր հագուստ: Օրինակ՝ 18-րդ դարում տղամարդիկ հագնում էին բարձրակրունկներ, զուգագուլպաներ, կրում կեղծամ, շպարվում էին, իսկ կանայք հագնում էին լայն ու ուռուցիկ զգեստ: Հիմա երկուսն էլ հագնում են ջինսե տաբատ: Նախկինում կանանց սոցիալական կարգավիճակը թույլ չէր տալիս մասնակցել քաղաքական ընտրություններին, մինչդեռ այժմ կանայք հավասարապես կարող են նախագահ կամ այլ քաղաքական գործիչ ընտրել:

Գենդերային հավասարությունը միայն «կանանց խնիրը» չէ, այլ նաև հավասարապես պետք է ընդգրկի տղամարդկանց:

Իրավահավասարությունը և՛ մարդու իրավունքների պաշտպանության խնդիր է, և՛ համարվում է մարդակենտրոն հասարակության զարգացման կայուն ցուցիչ:

ՀՀ-ում 2016թ. ընըրություններից հետո 866 համայնքի ղեկավարներից միայն 19-ն են կին: Այն դեպքում, երբ բարձրագույն կրթություն ստացածների 60% կին է: 18 նախարարներից մեկը կին է:

Այս ուղղությամբ Արագածոտնի մարզի գենդերային հանձնաժողովը 2016թ ՏԻՄ ընտրություններում՝ ՀՀ նախագահի հանձնարարականով, ակտիվացրեց կին ավագանու թեկնածուների մասնակցությունը:

Արդյունքում՝ եթե մինչ այս ընտրությունները մարզում կին ավագանու թեկնածուների թիվը 33 էր, ապա 2016թ. ընտրությունից հետո կին ավագանու թեկնածուների թիվն արդեն 49-ն է:

Գենդերային հանձնաժողովի հերթական նիստը կանդիդատնա մարզի առողջապահական ոլորտում գենդերային հիմնախնդիրներին, նպատակ ունենալով նկատելի դժվարությունների հաղթահարման ուղղությամբ տանել հետևողական աշխատանք, ինչը կապահովի մարզում գրանցված ծնունդների թվի աճին և առողջ սերնդի լույս աշխարհ գալուն:

Հանձնաժողովի նիստում քննարկված ցանկացած հարց նպատակ ունի լսել կարծիքներ, առաջարկություններ և ունենալ արդյունավետ լուծում:

Հաջորդ նիստում կքննարկենք ավագանու անդամների գործունեությունը, կրթության ոլորտում գենդերային խնդիրներին առնչվող հարցեր: